

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ
ՀԵՏԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍԻ ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ
Պետրոսյան Մ. Ա.**

Հոդվածում ուսումնասիրվում են ժողովրդավարության խթանման գործընթացի առանձնահատկությունները հետկոնֆլիկտային հասարակություններում, մասնավորապես, դիտարկվում է Հարավային Կովկասի չճանաչված պետությունների դեպքը: Փորձ է արվում բացահայտել ժողովրդավարացման գործընթացի վրա ազդող հիմնական գործոններն ու այդ գործընթացի ազդեցությունը միջազգային ճանաչման վրա:

Բանալի բառեր. ժողովրդավարություն, հակամարտություն, հետկոնֆլիկտային պետություն, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա:

Նախաբան: Հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերները հաղթահարելուն զուգահեռ չճանաչված պետությունները բախվում են մի շարք այլ խնդիրների, այդ թվում՝ պետական ինստիտուտների կայուն գործունեության համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծում, հասարակության կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովում, պետության զարգացման գործընթացի խթանում, սոցիալական ու տնտեսական մարտահրավերներին դիմակայելու համար գործուն մեխանիզմների ստեղծում և այլն: Մակայն առաջին ու կարևոր ընտրությունը, որն իր ուրույն ազդեցությունն ունի մյուս բոլոր բաղադրիչներ վրա, կառավարման համակարգի ընտրությունն է: Հարավային Կովկասի բոլոր երեք չճանաչված պետություններն էլ անկախության հռչակումից ի վեր հայտատարել են ժողովրդավարական պետություն կառուցելու ցանկության մասին և ուղղել իրենց ջանքերն այդ ուղղությամբ

առաջընթաց գրանցելու նպատակով: Այնուամենայնիվ, իրական ժողովրդավարական արժեքների վրա հիմնված պետության կառուցման ճանապարհին չճանաչված պետությունները բախվում են լրացուցիչ բարդությունների, որոնք պայմանավորված են նաև ճանաչված չլինելու հանգամանքով: Տարածաշրջանի չճանաչված պետությունների ժողովրդավարացման գործընթացը ևս դիտարկվել է տարբեր հեղինակների կողմից, մասնավորապես՝ Կասպերսեն, Կրաուս, Յուտերսոնկ [2, 3, 4, 9], այնուամենայնիվ շատ քիչ է ուսումնասիրվել ժողովրդավարական գործընթացների ազդեցության խնդիրը ճանաչման գործընթացի վրա: Վերոնշյալ խնդիրը դիտարկվում է սույն աշխատանքի շրջանակներում: Փորձ է արվում բացահայտել հետկոնֆլիկտային փուլում ժողովրդավարացման գործընթացների վրա ազդող գործոնները Լեոնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի օրինակով, ինչպես նաև բացահայտել այդ գործընթացների ազդեցությունը միջազգային ճանաչման վրա:

Ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունները չճանաչված պետություններում:

Հակամարտությունների, դրանց հետևանքով ձևավորված պետություններում (և՛ ճանաչված, և՛ չճանաչված) ժողովրդավարացման գործընթացների նկատմամբ հետաքրքրության աճը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ ժողովրդավարական պետությունները միմյանց դեմ չեն պայքարում, լայնածավալ պատերազմները բացառվում են [4]: Ժողովրդավարական պետության ստեղծումը կարևորվում է նաև այն պարզ պատճառով, որ չճանաչված պետությունները ձգտում են տեղ գրավել այնպիսի համակարգում, որը չի ընդունում նրանց որպես այդ նույն համակարգի մաս կազմող անդամներ [3]: Վերջին շրջանում չճանաչված պետություններն ընտրել են այն ուղին, որը համարում են նորմատիվային փոփոխություն միջազգային ասպարեզում: Որպես օրինակ դիտարկվում է Կոսովոյի «վերահսկվող ժողովրդավարությունը» և առհասարակ այն, որ հիմնական շեշտը դրվում է ժողովրդավարացման գործընթացի վրա և եզրակացնում, որ ճանաչումն իրատեսական է, եթե չճանաչված պետություններում ստեղծվել են արդյունավետ ժողովրդավարական ինստիտուտներ [2]: Այս ամենն առանցքային նշանակություն կարող է ունենալ պետության կայացման ու միջազգային ճանաչման տեսանկյունից: Եվ սա այն պարագայում, որ չճանաչված պետություններում ճանաչումը դիտարկվում է որպես առաջնային

նախապայման ու վերջնականապես, այն չճանաչված պետության հիմնական բնորոշ գիծն է և կենտրոնական դիրք է գրավում քաղաքական էլիտայի ծրագրերում [3], ինչպես նաև կարող է օգտագործվել ընտրությունների ժամանակ քարոզչական նպատակներով: Բացի այդ, դե ֆակտո պետությունների քաղաքական էլիտաները կարծում են, որ պետության կենսագործունեությունն ու ժողովրդավարացման գործընթացում գրանցած արդյունքներն ու առաջընթացի «ցուցադրումը» կարող են դրական ազդեցություն ունենալ ճանաչման գործընթացում [6]:

Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ վերջին մի քանի տասնամյակներում (հատկապես սառը պատերազմի ավարտից հետո) միջազգային հարաբերությունների բնագավառում լայն շրջանառության մեջ է դրվել Ժողովրդավարական խաղաղության տեսությունը, ըստ որի՝ պատերազմներն ու լայնածավալ ռազմական բախումները պակաս հավանական են ժողովրդավարական արժեքներ կրող հասարակություններում: Տեսության համաձայն՝ կառավարման ազատական-ժողովրդավարական ձևերը, անկախ իրենց սահմանափակումներից, լավագույնն են հակամարտությունների կարգավորման կամ քաղաքական հետևանքների մեղմացման տեսանկյունից: Ավելին, ցանկացած այլ՝ «կենսունակ այլընտրանքի» բացակայության պայմաններում ժողովրդավարական արժեքներն իրապես օգնում են խուսափել բռնության ցանկացած դրսևորումներից [9]:

Հարավային Կովկասի չճանաչված պետություններում ժողովրդավարությանն անցում կատարելու որոշումը բոլորովին էլ պատահական չէր, քանզի ավարտվել էր շուրջ 70 տարի տևած «ավտորիտարիզմի դարաշրջանը», որի ընթացքում այդ տարածքները նախ բռնակցվել էին այլ պետությունների, ապա նաև վարվել էր խիստ խտրական քաղաքականություն: Այդ քաղաքականության հետևանքով փոխվել էր բնակչության կազմը, սահմանափակումներ էին ներդրվել մայրենի լեզվի կիրառության և այդ լեզվով բարձրագույն կրթություն ստանալու հարցերում, վերաբնակեցումից հետո որոշ խմբեր ստացել էին սոցիալական արտոնություններ: Ընդ որում՝ մետրոպոլիտանների կողմից կիրառվող այդ սահմանափակումների արդյունքում տիտղոսակիր ժողովուրդը երբեմն զրկվել է բարձր պաշտոններ զբաղեցնելու հնարավորություններից, ինչը հանգեցրել է նաև հասարակության մարզինալացմանը: Ուստի ընտրությունների միջոցով սեփական ճակատագիրը վճռելու հեռանկարը միանգամայն ընդունելի

ու ընկալելի էր անկախության համար պայքար մղող ժողովուրդների համար:

Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի պետական ինստիտուտների գործունեության արդյունավետության վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Այդ ինստիտուտները երբեմն ընկալվում են որպես «ձևական» կառույցներ, իսկ իրական քաղաքական գործընթացներն իրականում մշակվում և ղեկավարվում են այդ ինստիտուտներից դուրս: Երբեմն քաղաքական համակարգի մաս կազմող ինստիտուտները դիտարկվում են որպես «թերի զարգացած» կառույցներ, որոնք չեն կարողանում ապահովել պետության բնականոն կենսագործունեությունը, իսկ իրականում կարևորագույն որոշումները կայացվում են ոչ թե այդ կառույցների, այլ անհատների կողմից: Ակնհայտ է, որ այս պարագայում ժողովրդավարական պետություն կառուցելու մասին կարելի է խոսել շատ մեծ վերապահումներով: Այնուամենայնիվ, լավատեսական մոտեցումներ ևս կան: Ինչպես Չարլզ Քինգն է նշում, 1990-ականների սկզբին ձևավորված և 2000-ականներին ավելի ակտիվ պետականաշինության գործընթաց նախաձեռնած դե ֆակտո պետությունները, որոնք կարողացել են ձևավորել սեփական զինված ուժերը, վերահսկել պետության տարածքը, կրթել երեխաներին և տնտեսությունը զարգացնելու քայլեր ձեռնարկել, երբեմն ավելի զարգացած են, քան այն ճանաչված պետությունները, որոնցից նրանք «անջատվել» են [7]: Հատկանշական է, որ վերոնշյալը վերաբերում է միայն Լեռնային Ղարաբաղին. Ֆրիդոմ Հաուսի (Freedom House) «Ազատությունն աշխարհում» զեկույցի [5] համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը համարվում է մասամբ ազատ երկիր, իսկ Ադրբեջանը՝ ոչ ազատ:

Ըստ Կասպերսենի՝ Լեռնային Ղարաբաղին իրապես հաջողվել է ստեղծել արդյունավետ գործող պետական ինստիտուտներ, ինչն անմիջականորեն կապված է Հայաստանից և Սփյուռքից տրվող ֆինանսական աջակցության հետ: Ե՛վ Լեռնային Ղարաբաղում, և՛ Հարավային Օսիայում անկախության հռչակումից հետո պետականաշինության գործընթացի վրա մեծ ազդեցություն են ունեցել բանակն ու զինվորականները: Աբխազիայում իրավիճակը մի փոքր այլ է, քանզի այստեղ բանակը միշտ համեմատաբար թույլ դիրքեր է ունեցել և մեծ դերակատարություն չի ունեցել ներքին քաղաքական կյանքում՝ չնայած այն հանգամանքին, որ, օրինակ, վետերանների **Անցիարա** ասոցիացիան բավական ամուր դիրքեր ունի հասարակության մեջ [2]:

Ներքին քաղաքական կյանքում զինվորականների ունեցած դերակատարության մասին վկայում են նաև հետկոնֆլիկտային փուլում անցկացված ընտրությունները, որոնց արդյունքում մեծ թվով զինվորականներ դարձել են օրենսդիր մարմնի անդամներ բոլոր երեք չճանաչված պետություններում էլ:

Հարավային Կովկասի դե ֆակտո պետություններն ունեն պետականության բոլոր աստիճանները՝ բացառությամբ միջազգային ճանաչման: Այդ պետություններն ավելի լավ են գործում, քան կարելի էր անկալել: Պետականաշինության գործընթացում գրանցած հաջողություններն անմիջական կապ ունեն այդ երկրների ղեկավարների ներդրած ջանքերի հետ [2]: Հարավային Կովկասի չճանաչված պետությունների համար էլ այսօր կենսական նշանակություն ունի արտաքին աջակցությունը, Լեռնային Ղարաբաղի դեպքում՝ Հայաստանից, Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում՝ Ռուսաստանից: Պետականաշինության գործընթացում ունեցած հաջողությունները գրանցվել են շրջափակման, ֆինանսական ու տնտեսական անկայունության պայմաններում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ բոլոր երեք դեպքերում էլ բարձրաստիճան պաշտոնյաները շատ հաճախ են բարձրաձայնում այն մասին, որ այս պետությունները վաստակել են միջազգային ճանաչման բոլոր հնարավորությունները, քանզի ապացուցել են իրենց կենսունակությունը անգամ նման սահմանափակ պայմաններում:

Չճանաչված պետություններում ժողովրդավարացման գործընթացի անքակտելի մասն են կազմում ընտրությունները: Ընտրական գործընթացները, թերևս ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների արտացոլանքն են, իսկ նախընտրական և հետընտրական գործընթացների համակողմանի վերլուծությունը սովորաբար թույլ է տալիս հասկանալ հասարակության կողմից ժողովրդավարական արժեքների ընկալման մակարդակն ու դրանց դրսևորման ձևերը: Հետկոնֆլիկտային ընտրությունները կարող են շրջադարձային կետ լինել պետության կառուցման ու ճանաչման, ինչպես նաև հետկոնֆլիկտային բազմաթիվ խնդիրների կարգավորման տեսանկյունից: Որոշ դեպքերում հետկոնֆլիկտային փուլի առաջին ընտրություններն առաջին քայլն են դեպի խաղաղությունն ու ժողովրդավարության ամրապնդումը, սակայն ավելի հաճախ դրանք կարող են հանգեցնել պատերազմական գործողությունների վերսկսմանը կամ ավտորիտարիզմի հաստատմանը [1]:

Հետկոնֆլիկտային շրջանում անցկացված ընտրությունները թերևս կարևոր է դիտարկել երկու հիմնական պատճառով. նախ դրանք կարող են ցուցիչ հանդիսանալ չճանաչված պետության հասարակական կյանքի կարգավորման ու կազմակերպման սկզբունքի ընտրության հարցում (ժողովրդավարություն, թե ավտորիտարիզմ), երկրորդ՝ դրանք կարող են ցույց տալ, թե որքանով է ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները պատրաստ դիմակայելու հետկոնֆլիկտային փուլի խնդիրների հաղթահարմանը: Միայն ժողովրդավարական սկզբունքների հիման վրա կազմակերպված և իրականացված ընտրությունները կարող են երաշխավորել պետական ինստիտուտների կայուն ու արդյունավետ աշխատանքը:

Միաժամանակ, չճանաչված պետություններում հետկոնֆլիկտային ժողովրդավարական ընտրությունները կարող են նպաստել պետության միջազգային ճանաչման բարդ ու երկարատև գործընթացի հաղթահարմանը՝ չնայած այն հանգամանքին, որ այստեղ դիտորդական առաքելությունները բացակայում են և, սովորաբար, միջազգային կազմակերպություններն ընտրություններից հետո հանդես են գալիս հայտարարությամբ, որ չեն ընդունում ընտրությունների արդյունքները: Դիտորդական առաքելությունները հիմնականում իրականացվում են ոչ թե պաշտոնական պատվիրակությունների ձևաչափով, այլ, մեծամասամբ, անհատների նախաձեռնությամբ: Միջազգային կազմակերպությունները չեն ճանաչում ընտրությունների արդյունքները՝ մատնանշելով այդ պետությունների ճանաչված չլինելը, սակայն իրականում դա առնչություն չունի պետության միջազգային ճանաչման հետ: Այդ կազմակերպությունների այս կամ այն արձագանքը մեծապես պայմանավորված է հենց հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված լինելու կամ տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր ունենալու հանգամանքով: Ի վերջո, ճիշտ կազմակերպված և իրականացված ընտրությունները ժողովրդավարական գործընթացների անքակտելի մասն են: Ընտրությունների անցկացման նպատակն առաջին հերթին տվյալ երկրի ներքին կյանքի կազմակերպումն է, իսկ ընտրությունները հայտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում երկու դեպքում միայն, նախ՝ եթե այդ պետությունը մեծ ազդեցություն ունի միջազգային հարաբերությունների վրա, կամ էլ ընտրությունների անցկացման ժամանակ տեղի են ունենում անկանխատեսելի շրջադարձեր: Ոչ մի պետություն կամ միջազգային կազմակերպություն այլ երկրում

անցկացված ընտրությունները ճանաչելու կամ չճանաչելու իրավասություններ չունի (ինչ վերաբերում է, օրինակ, Եվրոպայի խորհրդի հնչեցված գնահատականներին, ապա դրանք վերաբերում են միայն այդ միջազգային կառույցին անդամակցող երկրներին և այն էլ ոչ թե ընտրություններին, այլ ժողովրդավարացման գործընթացում այդ երկրի ստանձնած պարտավորություններին [10]): Այս տեսանկյունից միանգամայն անհիմն են տարբեր պետությունների կարծիքներն ու գնահատականները ընտրությունների ճանաչման գործընթացի հետ կապված: Չճանաչված պետություններում անցկացվող ընտրությունների նկատմամբ միջազգային կազմակերպությունների վերաբերմունքի այդ կաղապարների հաղթահարումը կարևոր է, քանզի ժողովրդավարացման գործընթացները, այդ թվում և ընտրական, կարող են խթան հանդիսանալ հակամարտության կարգավորման գործընթացում:

Առհասարակ, ժողովրդավարության և ճանաչման միջև կապը լայն շրջանառության մեջ դրվեց հատկապես Կոսովոյի շուրջ տեղի ունեցող իրադարձություններից հետո: Նախ՝ 2003թ. հրապատարկվեց «Չափանիշներ Կոսովոյի համար» փաստաթուղթը, որից հետո Հարավային Կովկասի երեք չճանաչված պետություններում էլ մեծացավ հետաքրքրությունն այդ իրադարձությունների շուրջ այն պարզ պատճառով, որ ենթադրվում էր, որ ճանաչումը կարող է շնորհվել այն սուբյեկտներին, որոնց հաջողվում է կառուցել արդյունավետ, ժողովրդավարական ինստիտուտներ: Այնուամենայնիվ, թեև ժողովրդավարության և ճանաչման միջև կապը կարող է թվալ շատ ակնհայտ, սակայն նմանատիպ նախադեպերն այսօր բացակայում են միջազգային պրակտիկայում: Այս ամենի համար կան բազմաթիվ պատճառներ, որոնցից գլխավորը, թերևս, աշխարհաքաղաքական «նպատակահարմարությունն» է, ինչը ևս մեկ անգամ փաստվեց արևմտյան պետությունների կողմից Կոսովոյի անկախության ճանաչման գործընթացի մեկնարկով և, որ ամենակարևորն է, վերահաստատվեց 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո Ռուսաստանի կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումից հետո:

Չճանաչված պետություններում ժողովրդավարացման գործընթացի վրա իր վճռորոշ ազդեցությունը կարող է ունենալ ժողովրդավարության մակարդակն ու ժողովրդավարացման գործընթացները «հովանավոր պետությունում» (patron state) [2]: Այս առումով ամենաշահեկան դիրքում գտնվում է Լեռնային Ղարաբաղը, քանզի միջազգային

կազմակերպությունները Հայաստանում տեղի ունեցող գործընթացները որակում են որպես ժողովրդավարական: Ավելին, 2016 թ. Ֆրիդրմ Հաուսի զեկույցի համաձայն [5]՝ Հայաստանը համարվում է մասամբ ազատ երկիր: Հարավային Օսիայի և Աբխազիայի պարագայում իրավիճակն այդքան էլ լավատեսական չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ նույն զեկույցի համաձայն՝ Ռուսաստանը ոչ ազատ երկրների շարքում է: Եվ վերջապես ճանաչման գործընթացների վրա իր ուրույն ազդեցությունը կարող է ունենալ հակամարտության բնույթը: Ինքնորոշման հակամարտությունների դեպքում անկախության հռչակման, հետագայում նաև ժողովրդավարական պետություն կառուցելու որոշումը կայացրել է տիտղոսակիր ժողովուրդը: Այս պարագայում իշխանություններին հեշտ է տրվում ժողովրդավարական բարեփոխումներն ու գործընթացները կառավարելը, չկան նաև ազգային ինքնության հետ կապված խնդիրներ, չկան էթնիկ հակասություններ, էթնիկ տարբերություններով պայմանավորված բռնության դրսևորումներ: Մինչդեռ Աբխազիայում իրավիճակն այլ է, քանզի բնակչության մեծամասնությունը արխազներ չեն: Այս հանգամանքը վճռորոշ դեր ունի ժողովրդավարացման գործընթացների վրա, ինչն իր վառ արտահայտությունը գտնում է նախընտրական և հետընտրական շրջանում, երբ ակտիվ քննարկվում է նաև թեկնածուների էթնիկ պատկանելիության հարցը, իսկ ընտրությունը կատարվում է՝ ելնելով էթնիկ պատկանելիությունից :

Չճանաչված պետություններում ժողովրդավարացման գործընթացում գրանցած հաջողությունների օբյեկտիվ գնահատման գործընթացում կան որոշ առանձնահատկություններ: Բհարկե, շատ կարևոր է, թե ինչպես է այդ պետությունն իրեն դիրքավորում կամ ինչ ազդեցություն ունի «հովանավոր պետությունը» ժողովրդավարացման գործընթացների վրա: Միննույն ժամանակ շատ կարևոր է նաև միջազգային կազմակերպությունների կողմից գրանցած առաջընթացն ու այդ գործընթացի վրա ազդող հիմնարար գործոնների վերհանումը: Ավելին, հետկոնֆլիկտային փուլում վարչակարգի փոփոխության, ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցման առանձնահատկությունները, գրանցած հաջողությունները կամ հետընթաց քայլերը նկատելի կարող են դառնալ միայն մշտադիտարկման և համեմատական վերլուծություն իրականացնելու դեպքում:

Եզրակացություն: Պետության ճանաչման և ժողովրդավարացման գործընթացների միջև կապը քաղաքագիտական շրջանակներում սկսել է

ակտիվ շրջանառվել Մառը պատերազմի ավարտից հետո, սակայն, ժողովրդավարացումը չի կարող միակ ու վճռորոշ գործոնը լինել պետության ճանաչման գործընթացում: Այստեղ, ի թիվս այլ խնդիրների, առաջնային է նաև տարբեր դերակատարների ազդեցությունը, հակամարտության բնույթը, ինչպես նաև «հովանավոր պետության» ազդեցությունը: Հարավային Կովկասի չճանաչված պետությունները ժողովրդավարացման գործընթացում լուրջ առաջընթաց են գրանցել, սակայն այդ առաջընթացը չի կարող ճանաչման գործընթացի հաջող ելքն ապահովող միակ գործոնը լինել: Այս պարագայում այն կարող է դիտարկվել որպես լրացուցիչ խթան, քանզի ժողովրդավարացման գործընթացը կնպաստի բանակցային գործընթացի արդյունավետության բարձրացմանը, կբացառվի հակամարտության հնարավոր ռազմական ելքն ու պատերազմական գործողությունների վերսկսման հեռանկարը: Այնուամենայնիվ, ժողովրդավարությունը չի կարող ներդրվել, եթե դրա համար չկան անհրաժեշտ նախապայմաններ, քանզի արտաքին դերակատարները, այդ թվում և՛ առանձին պետությունները, և՛ միջազգային կազմակերպությունները, և՛ այդ հակամարտության կարգավորման նպատակով ստեղծված միջազգային խմբերը կամ կոալիցիաները կարող են խթանել այդ գործընթացը տարբեր գործիքների ու գործոնների օգնությամբ, բայց երբեք ոչ պարտադրել:

**ПРОЦЕСС ПРОДВИЖЕНИЯ ДЕМОКРАТИИ В ПОСТКОНФЛИКТНЫХ
ОБЩЕСТВАХ НА ПРИМЕРЕ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ
ЮЖНОГО КАВКАЗА
Петросян М. А.**

В статье рассматриваются особенности продвижения демократии в постконфликтных обществах на примере непризнанных государств Южного Кавказа. Представлены основные факторы, влияющие на процесс демократизации и на процесс международного признания.

Ключевые слова: Демократия, конфликт, постконфликтное государство, Нагорный Карабах, Южная Осетия, Абхазия.

**PROMOTING DEMOCRACY IN POST-CONFLICT SOCIETIES:
UNRECOGNIZED STATES OF THE SOUTH CAUCASUS
Petrosyan M. A.**

The article discusses the features of promoting democracy in post-conflict societies in particular the case of unrecognized states of the South Caucasus.

The main factors influencing the process of democratization and the process of international recognition are discussed.

Keywords: democracy, conflict, post-conflict state, Nagorno Karabakh, South Ossetia, Abkhazia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brancati D., Snyder J. Rushing to the Polls: The Causes of Premature Postconflict Elections.// Journal of Conflict Resolution. 2011. № 55(3). P. 469-492.
2. Caspersen N. Separatism and Democracy in the Caucasus // Survival. 2008. Vol. 50. № 4. P. 113–136.
3. Caspersen N., States Without Sovereignty: Imitating Democratic Statehood // Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System. Routledge, London. 2011. P. 4.
4. Caspersen N., The South Caucasus after Kosovo: Renewed Independence Hopes? // Europe-Asia Studies. 2013. Vol. 65. № 5. P. 929-945.
5. Cederman L., Hug S., Krebs L. Democratization and Civil War: Empirical Evidence // Journal of Peace Research. Vol. 47. № 4. P. 377–394.
6. Freedom in the World 2016, https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf, (08.09.2019)
7. Ishiyama J., Batta A. The Emergence of Dominant Political Party Systems in Unrecognized States // Communist and Post-Communist Studies. 2012. № 45. P. 123-130.
8. King Ch. The Benefits of Ethnic War: Understanding Eurasia's Unrecognized States // World Politics. 2001. Vol. 53. № 4. P. 524-552.
9. Krause K., Jütersonke O., Peace, Security and Development in Post-Conflict Environments // Security Dialogue. 2005. Vol. 36(4). P. 447–462.
10. Selby J. The Myth of Liberal Peace-building // Conflict, Security and Development. 2013. Vol. 13. № 1. P. 57-86.
11. Торосян Т. Ильхам Алиев проиграл президентские выборы в Карабахе <https://regnum.ru/news/polit/1559948.html>, (08.09.2019).

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Մ. Ա. – դասախոս

Երևանի պետական լեզվաիտալական համալսարան

Հայաստանի ազգային ազրարային համալսարան

Էլ. փոստ՝ petrossianmaga@gmail.com

Տրվել է խմբագրություն 10.10.2019